Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«12» 03 2021թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Ավանդական բժշկության համալսարանի» (այսուհետ՝ ԱԲՀ) կրթական ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից ներքին շահակիցների՝ ուսանողների բավարարվածության հարցման անցկացման նպատակը, հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման, պահպանման կարգը:

1.2. Ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից բավարարվածության հարցումը (այսուհետև՝ Հարցումը) կազմակերպվում և իրականացվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԱԲՀ-ի «Մասնագիտության կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի», ԱԲՀ-ի «Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականության» հիման վրա:

1.3. Հարցման նպատակներն են՝

1) Բացահայտել բուհում առկա կրթական ռեսուրսներից, տեղեկատվական համակարգից, օժանդակ ծառայություններից, ստորաբաժանումների աշխատանքներից ուսանողների բավարարվածության աստիճանը:
2) Հետազոտության արդյունքների ուսումնասիրության միջոցով իրականացնել բուհի գործունեության մշտադիտարկումներ:
3) Օբյեկտիվ տվյալների ամբողջականության ապահովմամբ ստեղծել հիմքեր ՈԱ գործընթացների արդյունավետության գնահատման, ինչպես նաև հիմնավորված կառավարչական որոշումների կայացման համար:

II.Հարցաթերթիկի մշակման պահանջները

Հարցաթերթիկի մշակմանը ներկայացվող հիմնական պահանջներն են՝

1) հարցման նպատակի սահմանում,

2) հարցման բովանդակության համապատասխանություն Համալսարանի գործունեության նպատակներին և խնդիրներին,
3) մասնակցության գաղտնիություն,
4) հարցման գործընթացի համակարգվածություն և պարբերականություն,
5) պատճառահետևանքային կապեր հաստատող փակ և բաց հարցերի ներառում,
6) հարցման չափանիշների կիրառում:

III. Հարցման անցկացումը

3.1. Հարցումն անցկացվում է Ուսումնական մասի կողմից՝ թղթային և/կամ առցանց տարբերակով՝ ըստ նախապես հաստատված ժամանակացույցի[1]:

3.2. Հարցման անցկացումից մեկ շաբաթ առաջ Ուսումնական մասը ուսանողներին նախապես տեղեկացնում է հարցման անցկացման ձևի (թղթային, առցանց) և նպատակի մասին:

3.3. Հարցումն անցկացվում է Կանոնակարգին կից ներկայացված հարցաթերթով (Հավելված 1):

3.4. Հարցումն իրականացվում են կուրսի/խմբի ուսանողների առնվազն երկու երրորդի մասնակցության պայմաններում՝ պահպանելով ժամանակացույցով սահմանված վերջնաժամկետները:

IV. Հարցման արդյունքների մշակումը և օգտագործումը

4.1. Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում են Որակի ապահովման մասնագետների, Ուսումնական մասի և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ:

4.2. Հարցաթերթն ունի կարծիքների և առաջարկությունների բաժին, որի արդյունքները մշակվում և ներկայացվում են ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

4.3. Հարցաթերթում կատարված ուղղումները, ջնջումները, առցանց տարբերակում խոտանված պատասխանները չեն հաշվարկվում:

4.4. Վերլուծության արդյունքները ներկայացվում են Ուսխորհրդին, համապատասխան ստորաբաժանումներին՝ ծանոթանալու և մեկ շաբաթվա ընթացքում բարելավման առաջարկություններ ներկայացնելու համար:

4.5. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը մեկ ամսվա ընթացքում հրավիրում է նիստ, որտեղ քննարկվում են Հարցման արդյունքները և մշակվում համապատասխան առաջարկություններ և խորհուրդներ՝ ուղղված վերհանված տարաբնույթ խնդիրների ու թերությունների շտկմանը:

---

[1] *Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի և Ուսումնական մասի վարիչի կողմից կազմվում է Համալսարանում հարցումների անցկացման ժամանակացույց:*

4.6. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը մշակում է բարելավման գործողությունների ծրագիր, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները և ներկայացնում ԱԲՀ-ի ԳԽ-ի հաստատմանը:

4.7. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը տարեկան պլանավորման համաձայն յուրաքանչյուր տարի, ըստ հրատապության և անհրաժեշտության, անցկացնում է կրթության որակի ՊԻԳԲ շրջափուլի գնահատում. կրկնաստուգումներ (հարցախույզեր, ուսանողական ֆոկուս խմբեր)՝ համակողմանի ուսումնասիրելով և գնահատելով բացահայտված խնդիրների ու թերացումների շտկման, բարելավման ուղղությամբ տարված աշխատանքներից ներքին շահակիցների բավարարվածությունը:

4.8. Հարցման արդյունքները օգտագործվում են ԱԲՀ-ի ղեկավարության, ֆակուլտետների/ամբիոնների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից որոշումներ կայացնելիս, մասնագիտության կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման ու բարելավման, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների շրջանում հաշվետվողականության ապահովման նպատակով:

4.9. Հարցման արդյունքներին ներքին և արտաքին շահակիցները ծանոթանում են Համալսարանի պաշտոնական կայքում հրապարակված ամփոփ հաշվետվությունների/զեկույցների միջոցով:

4.10. Հարցման գնահատված հարցաթերթերը և վերլուծությունները պահպանվում են Ուսունական մասում՝ 5 տարի:

V. Եզրափակիչ դրույթներ

5.1. ԱԲՀ-ի հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԱԲՀ-ի Գիտական խորհուրդը:

5.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

Հավելված 1

«____» _____20 թ.

Ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից ուսանողների բավարարվածության հարցման

հարցաթերթ

Հարգելի՛ ուսանող, լինելով ԱԲՀ-ի կրթական ծառայությունների լավագույն սպառողը, դուք կարող եք լավագույնս մեկնաբանել՝ որքանով են Համալսարանի ենթակառուցվածքները և ռեսուրսային ապահովվածությունը բավարարում կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը և դրանով աջակցել ուսումնական գործընթացի բարելավմանը: Խնդրում ենք մասնակցել այս անանուն հարցմանը, որը կօգնի բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր պատասխանի համար նշելով միայն մեկ վանդակում:

1. Սոցիալ-ժողովրդագրական հարցեր

1.1. Նշեք Ձեր սեռը

Արական ☐ Իգական ☐

1.2. Նշեք Ձեր տարիքը

○ 18-24

○ 25-30

○ 31-ից բարձր

1.3. Նշեք Ձեր ֆակուլտետը _____ Կուրսը ____ Խումբը _____

2. Բավարարվածությունը առկա ռեսուրսներից

Բավարարվածությունը գրադարանից

2.1. Օգտվու՞մ եք ԱԲՀ-ի գրադարանից.

Այո ☐ Ոչ ☐

2.2. Որքա՞ն հաճախ եք օգտվում գրադարանից.

○ Գրեթե ամեն օր

○ Շաբաթվա ընթացքում 1-2 անգամ

○ Միայն քննություններին պատրաստվելիս

○ Ամիսը մի քանի անգամ

2.3. Գրադարանում առկա գրքերը և էլեկտրոնային գրականությունը բավականացնու՞մ են դասընթացներին պատրաստվելիս.

○ Այո, ամբողջովին բավարարում են

○ Մասամբ, քանի որ գրադարանային ֆոնդը հին է

○ Մասամբ, քանի որ որոշ դասընթացների գրականություն առկա չէ գրադարանում

○ Ընդհանրապես չեն բավարարում

2.4. Նշեք դասընթացներ, որոնք յուրացնելու համար գրադարանում առկա գրքերը շատ հին հրատարակությունների են. _____

_____

2.5. Գրադարանն ապահովո՞ւմ է Ձեզ անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

2.6. Հագեցա՞ծ է ընթերցասրահը ինտերնետ հասանելիությամբ համակարգիչներով.

○ Այո
○ Ոչ

2.7. Համակարգիչների քանակը բավականացնում է ընթերցասրահից օգտվողներին.

○ Այո
○ Ոչ

2.8. Ընթերցասրահում առկա՞ է տրամադրող լռություն. Այո ☐ Ոչ ☐

2.9. Ընթերցասրահի լուսավորությունը բավարարու՞մ է Ձեզ. Այո ☐ Ոչ ☐

2.10. Ընթերցասրահի ջերմությունը բավարարու՞մ է Ձեզ. Այո ☐ Ոչ ☐

2.11. Ձեզ զոհացնում է գրադարանի և ընթերցասրահի աշխատաժամերը և սպասարկումը.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

Բավարարվածությունը լսարաններից

2.11. Մշտապես ապահովվա՞ծ եք լսարաններով. Այո ☐ Ոչ ☐

2.12. Լսարանի լուսավորությունը բավարարու՞մ է Ձեզ. Այո ☐ Ոչ ☐

2.13. Լսարանի ջերմությունը բավարարու՞մ է Ձեզ. Այո ☐ Ոչ ☐

2.14. Ձեզ տրամադրված լսարանը բավարարո՞ւմ է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը.

○ Այո, ամբողջովին բավարարում է
○ Մասամբ, քանի որ լսարանը հագեցած չէ տեսալսողական սարքավորումներով (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ)
○ Ոչ

2.15. Ինչպիսի՞ փոփոխություններ կիրականացնեիք լսարաններում.

_____

_____

Բավարարվածությունը մասնագիտական կաբինետներից և լաբորատորիաներից.

2.16. Գործնական պարապմունքների համար անհրաժեշտություն ունենո՞ւմ եք օգտվել լաբորատորիաներից.

○ Այո
○ Ոչ

2.17. Ձեզ բավարարո՞ւմ են լաբորատորիայում առկա սարքավորումները.

○ Այո

○ Ոչ

2.18. Արդյոք լաբորատորիայում կատարվող աշխատանքներն ամրապնդո՞ւմ են Ձեր տեսական գիտելիքները.

○ Այո

○ Ոչ

Այլ _____

2.19. Ինչպիսի՞ փոփոխություններ կիրականացնեիք լաբորատորիաներում.

_____

2.20. Օգտվո՞ւմ եք մասնագիտական կաբինետներից.

○ Այո

○ Ոչ

2.21. Մասնագիտական կաբինետների սարքավորումները թույլ տալի՞ս են լիարժեք կերպով կազմակերպել Ձեր գործնական պարապմունքները.

○ Այո

○ Ոչ

Այլ _____

2.22. Գործնական պարապմունքներ անցկացնելու ժամանակ դուք ապահովվա՞ծ եք համապատասխան սարքավորումներով.

○ Այո

○ Ոչ

Այլ_____

2.23. Գնահատեք՝

		Գեր.	Լավ	Բավ.	Անբավ.
1.	Համալսարանի ընդհանուր սանիտարահիգիենիկ և սանհանգույցների վիճակը				
2.	Համալսարանի ջեռուցման համակարգը				
3.	Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի սպասարկումը				
4.	Սննդի կետը				
5.	WiFi գոտիները				

2.24. Ինչպե՞ս կարող եք Ձեր դժգոհությունները, առաջարկություններն արտահայտել Համալսարանի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ (նշել հնարավոր բոլոր տարբերակները)

○ Տեղեկացնել դեկանին

○ Տեղեկացնել դասախոսներին

○ Տեղեկացնել ամբիոնի վարիչին

○ Տեղեկացնել ուսումնական մասի վարիչին

Այլ_____

3. Բավարարվածությունը տրամադրվող տեղեկատվությունից

3.1. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն Ձեր իրավունքների և պարտականությունների մասին.

○ Այո
○ Ոչ

3.2. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը.

○ Ֆակուլտետի դեկանի
○ Կուրսի խորհրդատուի
○ Ուսումնական մասի վարիչի
○ Դասախոսի
○ Ուսանողական խորհրդի

Այլ_____

3.3. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ԱԲՀ-ում կիրառվող գնահատման համակարգի մասին.

○ Այո
○ Ոչ

3.4. Ձեզ տրամադրվե՞լ է ուսումնական գործընթացի, քննական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

3.4.1. Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը.

_____

3.5. Ձեզ բավարարե՞լ է քննությունների բողոքարկման կարգին առնչվող տեղեկատվությունը.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

3.6. Ձեզ տրամադրվե՞լ է դասընթացների միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերին առնչվող տեղեկատվություն.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

3.7. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ուսումնասիրվող դասընթացի նպատակների վերաբերյալ.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

3.7.1. Ու՞մ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը.

○ Ֆակուլտետի դեկանի

○ Հասանելի է եղել բուհի կայքում
○ Ամբիոնի վարիչի
○ Դասախոսի
Այլ_____

3.8. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ԱԲՀ-ում գործող «Ակադեմիական ազնվության» կանոնակարգի մասին.

○ Այո
○ Ոչ

3.8.1. Ու՞մ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը.

○ Ֆակուլտետի դեկանի
○ Հասանելի է եղել բուհի կայքում
○ Ամբիոնի վարիչի
○ Դասախոսի
Այլ_____

3.9. Դուք բավարարվա՞ծ եք համալսարանական միջավայրում առկա ակադեմիական ազնվության մակարդակից.

○ Այո
○ Ոչ
○ Մասամբ

3.10. Ունե՞ք առաջարկներ համալսարանական միջավայրում ակադեմիական ազնվության պահպանման համար.

_____

_____

3.11. Ձեզ տրամադրվե՞լ է տեղեկատվություն ԱԲՀ-ի «Ուսանողի ուղեցույց»-ի վերաբերյալ.

○ Այո
○ Ոչ

3.11.1. Ու՞մ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը.

○ Ֆակուլտետի դեկանի
○ Հասանելի է եղել բուհի կայքում
○ Ամբիոնի վարիչի
○ Դասախոսի
Այլ_____

3.12. Խորհրդատվություն ստանալու նպատակով հիմնականում ո՞ւմ եք դիմում.

○ Ֆակուլտետի դեկանին
○ Կուրսի խորհրդատուին
○ Ուսումնական մասի վարիչին
○ Դասախոսներին
○ Ուսանողական խորհրդին
Այլ_____

3.13. Ձեզ դասավանդող դասախոսներն ուսանողներին տրամադրու՞մ են տեղեկություններ իրենց գիտական նվաճումների վերաբերյալ (օրինակ, իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):

○ Հազվադեպ
○ Հաճախ
○ Միշտ
○ Դժվարանում եմ պատասխանել

3.14. Ինչպե՞ս եք տեղեկանում Համալսարանի գործունեության կամ ձեռքբերումների մասին:
/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

1.	Գիտական խորհրդի նիստերին մասնակցելով	
2.	Համալսարանը պաշտոնական կայքին հետևելով	
3.	Ուսանողական խորհրդի նիստերին մասնակցելով	
4.	Բուհում փակցված հայտարարություններից	
5.	Սոցիալական ցանցերից / Facebook, ... /	

3.15. Տեղյա՞կ եք, թե ուսանողներն ինչպես կարող են մասնակցել համալսարանի կառավարմանը.

○ Այո
○ Ոչ

3.16. Ուսանողների կարծիքը հաշվի առնվո՞ւմ է համալսարանում որոշումներ կայացնելիս.

○ Այո
○ Ոչ
○ Դժվարանում եմ պատասխանել

4. Բավարարվածությունը ԱԲՀ-ի պաշտոնական կայքից, ֆեյսբուքյան էջից

4.1. Հաճա՞խ եք օգտվում ԱԲՀ-ի էլ. կայքից

○ Օգտվում եմ մշտապես
○ Հաճախ եմ օգտվում
○ Հազվադեպ եմ օգտվում
○ Չեմ օգտվում

4.2. Գնահատեք Ձեր բավարարվածությունը կայքի կառուցվածքից

○ Լիարժեք բավարարված եմ
○ Հիմնականում բավարարված եմ
○ Բավարարված եմ մասամբ
○ Բավարարված չեմ
○ Դժվարանում եմ պատասխանել

4.3. Գնահատեք Ձեր բավարարվածությունը տեղեկատվության ստացման հարմարավետությունից.

○ Լիարժեք բավարարված եմ

- ○ Հիմնականում բավարարված եմ
- ○ Բավարարված եմ մասամբ
- ○ Բավարարված չեմ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

4.4. Գնահատեք Ձեր բավարարվածությունը տեղեկատվության լիարժեքությունից.

- ○ Լիարժեք բավարարված եմ
- ○ Հիմնականում բավարարված եմ
- ○ Բավարարված եմ մասամբ
- ○ Բավարարված չեմ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

4.5. Գնահատեք Ձեր բավարարվածությունը նորությունների լուսաբանումից.

- ○ Լիարժեք բավարարված եմ
- ○ Հիմնականում բավարարված եմ
- ○ Բավարարված եմ մասամբ
- ○ Բավարարված չեմ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

4.6. Գնահատեք Ձեր բավարարվածությունը կայքի ընդհանուր գրավչությունից.

- ○ Լիարժեք բավարարված եմ
- ○ Հիմնականում բավարարված եմ
- ○ Բավարարված եմ մասամբ
- ○ Բավարարված չեմ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

4.7. Հաճա՞խ եք օգտվում ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջից

- ○ Օգտվում եմ մշտապես
- ○ Հաճախ եմ օգտվում
- ○ Հազվադեպ եմ օգտվում
- ○ Չեմ օգտվում

4.8. Գնահատեք Ձեր բավարարվածությունը տեղեկատվության լիարժեքությունից.

- ○ Լիարժեք բավարարված եմ
- ○ Հիմնականում բավարարված եմ
- ○ Բավարարված եմ մասամբ
- ○ Բավարարված չեմ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

4.9. Գնահատեք Ձեր բավարարվածությունը նորությունների լուսաբանումից.

- ○ Լիարժեք բավարարված եմ
- ○ Հիմնականում բավարարված եմ
- ○ Բավարարված եմ մասամբ
- ○ Բավարարված չեմ
- ○ Դժվարանում եմ պատասխանել

Առաջարկություններ ԱԲՀ-ի կայքի, ֆեյսբուքյան էջի բարելավման վերաբերյալ. _____

_____

5. Բավարարվածությունը վարչական ստորաբաժանումների աշխատանքից

5.1. ԱԲՀ-ի վարչական ծառայություններից օգտվե՞լ եք և որքանո՞վ եք գոհ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

	Ծառայության տեսակ	Օգտվել եմ		Գոհ եմ	
		Այո	Ոչ	Այո	Ոչ
1.	Տեղեկանքների տրամադրում				
2.	Ակադեմիական տեղեկագրերի տրամադրում				
3.	Քննությունների կազմակերպում (հարցաշարերի տրամադրում, քննությունների օրերի հայտնում)				
4.	Դիմումների ընդունում (դիմորդների ընդունելության նախապատրաստում)				
5.	Ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը				
6.	Գրադարանային ծառայություններ				
7.	Ուսանողների աղապտացման ծրագրերի իրականացում				
8.	Խորհրդատվական աջակցություն				
	8.1. ակադեմիական				
	8.2. հոգեբանական				
	8.3. սոցիալական				
	8.4. այլ				

5.2. Գնահատե՛ք համալսարանի վարչական ստորաբաժանումների և կառույցների գործունեությունը.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Վարչական ստորաբաժանում	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
1.	Ուսումնական մաս՝				
2.	Ամբիոններ				
3.	Դեկանատ				
4.	Արտաքին կապերի բաժին				
5.	ՄՈԿ և ընդհանուր բաժին				
6.	Գրադարան				
7.	Հաշվապահություն				
8.	Ուսանողական խորհուրդ				
9.	Ուսանողական գիտական ընկերություն				

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար